ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2017

«ԱՆՋԱՏ ԱՇԽԱՐՀՆԵՐ. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐՈՒՄ» ԶԵԿՈՒՅՑ

2017 թ. հոկտեմբերի 17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ.

Աշխարհի 25 ամենահավասար երկրներից տասը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում են, որտեղ է նաև Հայաստանը: Այդուհանդերձ, այստեղ էլ անհավասարություն առկա է թե՛ երկրների միջև, թե՛ երկրների ներսում:



Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում եկամտային անհավասարությունն ամենամեծն է Թուրքիայում: Աշխարհում ամենամեծ տնտեսական անհավասարությունը Հարավային Աֆրիկայում է, ամենափոքրը՝ Ուկրաինայում: Աղբյուրը՝ ՀԲ:



ՄԱՅՐԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ. ԱԵԿԱ տարածաշրջանում ամենաբարձրը Ղրղզստանում է (76/100.000 կենդանի ծնունդի հաշվով), ամենացածրը՝ Բելառուսում՝ (4/100.000): Հայաստանում՝ 19.6/100.000 (2013-2015):

Ամբողջական զեկույցի համար այցելեք unfpa.org/swop:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը 2008 թ.-ին գրեթե կրկնակի ավելացրեց մայրական խնամքին ուղղվող հատկացումները և ներդրեց ծննդօգնության պետական հավաստագրեր՝ հղիներին տրամադրելով անվճար ծառայություններ: Արդյունքում **հղիների բոլոր եկամտային խմբերի համար մեծապես վերացավ անհավասարությունը**: Այս առումով Հայաստանը հայտնվեց աշխարհում առաջատար դիրքերում:



ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ

Կանանց և տղամարդկանց աշխատավարձերի անհավասարությունը.

Ողջ աշխարհում կանանց և տղամարդկանց աշխատավարձերի միջև ճեղքվածք կա՝ ի վնաս կանանց: ԱԵԿԱ տարածաշրջանում դրությունն ամենալավը Սլովենիայում է, ամենավատը՝ Թուրքիայում:



Ամբողջական զեկույցի համար այցելեք unfpa.org/swop:

Բացի այդ, կորելացիոն կապ կա շնչին ընկնող բարձր համախառն ներքին արդյունքի և ցածր գենդերային անհավասարության միջև:



ՄԱԶԾ գենդերային անհավասարության համաթիվ Աղբյուրը՝ Gonzales et al. (2015a)

Հասարակությունները տարբեր կարծիք ունեն տղամարդկանց և կանանց կրթության և աշխատանքի իրավունքների վերաբերյալ:



ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ



ԱԵԿԱ տարածաշրջանում վաղ տարիքում ծննդաբերությունների առումով առաջատարը Ադրբեջանն է: 15-19 տարեկանում ամենաքիչ ծնունդները գրանցվում են Բոսնիայում և Հերցեգովինայում: Հայաստանի համար այս ցուցանիշը կազմում է 23՝ 1000 15-19 տարեկան կնոջ հաշվով:

Ամբողջական զեկույցի համար այցելեք unfpa.org/swop: